րում՝ չը գիտեմ, միայն կարծեմ ծայրայեղութեան էք դիմում։

Հերքելու կարօտ կէտեր շատ կան ձեր նամակի մէջ, միայն չարժեն։

Թոմաս Մենեբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել որ վարչութեան մէջ ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ բաց է ստորագրութիւն յօգուտ Թիֆլիսում հիմնելի որբանոցի, կայսր Աղեքսանդր II-ի անունով։

ՇԱՄԱԽՈՒՑ պ. Էմմանուէլ Փիրբուդաղեանցից ստացանք 8 րուբլ հետևեալ նամակով. «Ես և իմ տունս ուրախութեամբ պարտաւորվել էինք հինգ ամիս շարունակ ամսական ութ րուբլ զոհել մեր Թիւրքիահայ սովատանջ եղբարց։ Չորս ամսվայ համար ուղարկել եմ, այժմ ուղարկում եմ մնացեալ 8 րուբլ և խնդրեմ բարեհաճել իր պատկանեալ տեղը հասցնել։»

Ստացանք ՄՕԶԴՕԿԻՑ 20 ր. 8 կ. յօգուտ Վանի կողմերին պատահած երկրաշարժից վնասվածների, որ մի երեկոյթում ժողովեցին իրանց մէջ հաւաքված երիտասարդ ուսանողները։ Այդ փողը մեզ ուղարկեց Գ. քահանայ Տուրփայեան

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ հաղորդում են որ յօգուտ Հայաստանի երկրաշարժից վնասվածների պ. Դ. Աւանեան դիտաւորութիւն ունի շուտով մի կօնցերտ տալ։ Ցանկանում ենք երիտասարդին կատարեալ աջողութիւն։

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ յունիսի 15-ին հայ սիրողները քաղաքային ամարային թատրօնում մի ներկայացում տուին բարեգործական նպատակով։ Թատրօնը լի էր և ներկայացումը, ինչպէս հաղորդում է մեր թղթակիցը, աջող է եղել։

ԹԻՖԼԻՍԻ հեռագրատան բաժինը յունիսի 27-ից արդէն բացվել է, Դվօրցօվայա փողոցի վրա, Արծրունու գալէրէում։ Մուտքը շարքի կողմից է։ Թելը անց է կացրած այստեղից մինչև գլխաւոր հեռագրատունը, այնպէս որ հեռագիրները ուղղակի այստեղ են ընդունվում և ուղարկվում։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Ստացվեցաւ այստեղ մօտ օրերումս 70 օրինակ «Հրապարակախօս ձայն» գրքից։ Այս գիրքը անգնահատելի է գնահատողների համար, բայց շատերը դժուարանում են հատուցանել 2 րուբլ և ունենալ մի օրինակ այս գրքից։ Խորհուրդ ենք տալիս այստեղի Չէրքէզեաններին գնել մի մի հատ Շահազիզեանի գրքից և կարդալ. գուցէ Չէրքէզեանի և նրա նմանների մէջ կը տեսնեն իրանց տիպը։»

Մեզ գրում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ. «Յունիսի 16-ին, Արղութեան օրիորդաց դպրոցում աշխարհագրութեան հարցաքննութեան ժամանակ մի վարժապետ, որի անունը ամենքը գիտեն, բայց որին ես արհամարհում եմ անուանելու, խայտառակ կերպով վարվեց տեսչի հետ հրապարակապէս։ Տեսչի պատիւը վիրաւորված է, վիրաւորված է գզլի կերպով և ուսումնարանի պատիւը։ Կը սպասենք թէ ինչ անօրէնութիւն կառնէ այս մասին ուսումնարանի հոգաբարձութիւնը։ Այսպէս է միշտ մեր հասարակութիւնը. մինչև որ չը փորձեն նստել նրա գլխին, նա չի իմանայ թէ ինչ տեսակ խարդախ մարդկանց հետ գործ ունի։»

Մի պարոն խնդրում է մեզ տպել հետևեալ նկատողութիւնը. «Մի քանի ամիս սորանից առաջ «Մշակի» համարներից մէկում ուրախութեամբ կարդացինք պ. Աղասի Մէլիք-Այվազեանի մի նամակ, որով պարոնը յայտարարում էր թէ բաց է անում Հաւլաբարում մի ընթերցարան։ Ուրախութեամբ ամեն օր սպասում էինք որ ահա այսօր կամ վաղը կը բացվի ընթերցարանը, բայց դժբաղդաբար անցան ամիսներ և ընթերցարանի յիշատակը փոքր առ փոքր անյայտացաւ։ Ցանկալի կը լինէր, որ պարոնը օգուտ քաղէր իր ձեռք բերած խրատներից և բազմաթիւ ստորագրողներից, որոնց թիւը, ինչպէս ասում են 200-ի է հասնում, և բանար ընթերցարանը։

Մենք իմացանք որ Ներսիսեան դպրոցի տեսուչ Արշակ Նահապետեան և նրա օգնական Ամիրան Մանդինեան կանչվեցան յանկարծակի կերպով Էջմիածին։ Ասում են որ յունիսի 26-ին երկուսն էլ ուղևորվեցին դէպի Էջմիածին,

Մի ծիծաղելի լուր։ Այն օրից երբ երևեցաւ երկնքի վրա գիսաւոր աստղը, Թիֆլիսի ժողովուրդը այլ և այլ յիմար մարգարէութիւններ սկսեց անել։ Մի մարդ բաց է անում Էֆիմէրդին և գտնում է նրա մէջ այն գուշակութիւնը որ իբր թէ շուտով ջրհեղեղ կը լինի։ Այդ լսելով նրա ծանօթը, որ շինութիւն ունէր, վճռում է դադարեցնել շինութիւնը ասելով. «Ահա շուտով ջրհեղեղ կը լինի, այլ ևս ինչիս է հարկաւոր շինութիւնս։»

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են. «Քաղաքիս հայ օրիորդական դպրոցում, ուր տիկին Տէր-Ղեոնդեանից յետոյ ձեռագործութիւնը և կարը մասամբ ընկած էին, այժմ նորից վերականգնած են, ներկայ վարժուհու, օրիորդ Մահտեսեանի անխոնջ աշխատութեամբ։ Մօզդօկի օրիորդական դպրոցի և նրան կից թատրօնական դահլիճի հոյակապ շինութիւնները արագ կերպով առաջ են գնում նրա հիմնադիր պ. Գանջումեանի անդուլ հոգացողութեամբ։»

«Кавказъ» լրագրում կարդում ենք որ 27-ին յունիսի օրիորդ Աստղիկ ուղևորվել է դէպի Կ. Պօլիս, փօթի-Թիֆլիսեան երկաթուղով։ Երկաթուղու կայարանում հաւաքվել են օրիորդին ճանապարհ դնելու համար նրա պաշտողներն ու բարեկամները։ Վագօնը, որի մէջ նստեց օրիորդը, լցվեցաւ ծաղիկներով։ Նոյն րօպէին ներկայացրին օրիորդին «Մշակի» վերջին համարը որի մէջ տպված էր Թատրօնասէր ստորագրութեամբ յօդուածը։ Աստղիկ «Մշակի» համարը և Սունդուկեանցի պատկերը ձեռին, շրջապատված փունջերով, մեկնեցաւ Թիֆլիսից։

«Кавказскій Курьеръ» լրագիրը համակրութեամբ արտատպեց իր վերջին համարներից մինում «Մշակի» առաջնորդող յօդուածը «Կովկասեան համալսարանի» մասին։

Մեզ գրում են Աղէքսանդրապօլից որ մտադրութիւն կայ առաջիկայ սեպտեմբերին բանալ III-որդ դասատուն Արղութեան օրիորդական դպրոցում, որ այժմ բաղկացած է երեք պատրաստական և I և II դասատուներից։

Շնորհակալութեամբ ստացանք չորս հատ հայերէն գրքոյկներ կրօնական բովանդակութեան, որոնցից երկուսը «Ճառ մխիթարութեան» և «Աղօթք անձում ես» տպված են Բագուի մէջ, 1871 և 1874 թւերին, իսկ երկուսը «Բարի լուր» և «Աւետիք» տպված են Թիֆլիսում 1880 և 1881 թւին, Յ. Մարտիրոսեանցի տպարանում։ Այդ բոլոր գրքոյկներն էլ թարգմանութիւններ են երևում։ Մինը «Ճառ մխիթարութեան» թարգմանել է Ա. Վարդանեանց։ Միւսների թարգմանիչների անունները անյայտ են մեզ, միայն մինի տակ, այն է «Բարի լուր» բրօշիւրի տակ յիշված է որ դա թարգմանված է ռուսերէն «Благая Вѣсть» գրքոյկից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՄԱՍԻՍ" ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾ

Հետևեալ հատուածները Երևանէն գրուած նոր նամակէ մը քաղուած են։

„Տեսնելով աշխարհիս փորձերը, թերահաւատ մարդն անգամ սկսում է ակամայից հաւատալ թէ չը կայ ոչինչ որ թագչի. այո՛, հազար անգամ սուրբ են Յիսուսի խօսքերը… Ինչպէս ասացի վերը, Պետերբուրգի երկու յայտնի անձինք, ծածկվելով այսչափ տարի „ազգասէրի" վերարկուով, վերջապէս մերկացան և ի՞նչպէս—որ և իցէ մի հատ նամակից, որը տպված էր Մասիսի մէջ, իսկ յետոյ արտատպած Մշակից։ Այդ օրհասական նամակը կատարեց այն, ինչ որ չը կարողացաւ վճռել տասնեակ տարիներ ամբողջ հայ լրագրութիւնը. Նա կարողացաւ սթափեցնել համայն հայ հասարակութիւնը և դարձնել նորա ուշադրութիւնը այն մարդերի վրա, որոնց ձեռքին էր ազգի սուրբը, Էջմիածնի չորս հարիւր հազար րուբլը։ Էջմիածնի գլխաւոր պրօկուրօրը ստիպված գտնվեցաւ բողոքել կաթուղիկոսի բերանից, բայց ո՛րչափ անյաջող. խօսելով աթոռի փողերի մասին, նա ոչինչ չասեց այդ աթոռը 1867-ից յետոյ մտած գումարի մասին, այլ խօսեց միայն տասն ու երկու տարի առաջ տեսած հաշիւների համար, մինչդեռ յայտնի է, որ այդ հաշիւները վերաբերվում են գրեթէ Մատթէոս կաթուղիկոսի ժամանակին. ուրեմն Էջմիածնի ընդհանուր պրօկուրօրը ձգտելով Մասիսի երևան հանած սոսկալի գեղծումը գոցել, Էջմիածնի գործը աւելի փչացրեց. ի՞նչ արած երբ ոչինչ բան չէ անցնում աշխարհում անպատիժ… Այսպիսով Մասիսի նետած կայծից սկսեց գոյանալ մի հրդեհ, որը մարելու համար ոչինչ միջոց չէ կարողանում գտնել Էջմիածինը. այս քանի օրերս անցաւ Մոսկվայից Պետերբուրգ կաթուղիկոսի յատուկ պատուիրակ Աղաւնիեան եպիսկոպոսը. հասարակաց ձայնը հաստատում է միահամուռ, որ նա ունէր իր մօտ կաթուղիկոսի սեփական նամակը, որով նա աղաչում է Պետերբուրգի երկու ազգասէրներին խղճալ իր վրա և ազատել պատասխանատուութիւնից ազգի առաջ, բայց երբ ազգասէր անունը եղել է միայն մի պատրուակ չորս հարիւր հազար րուբլ գանձը իրանց ծիրանները գցելու համար, արդեօք հնարի՞ն կը լինի կաթուղիկոսական օրհնանքով կամ անէծքով այդ գանձը յետ կորզել. Հարկաւոր չէ առանձին հեռատեսութիւն ունենալ այս թշուառ բանակցութեան արդիւնքը գուշակելու համար…

„Բայց մի բան, որ ամենից աւելին է զարմանալի այս տխուր պատմութեան մէջ, այդ մեր ազգային մամուլի կուրութիւնն է. և յիրաւի, գիտցուք թէ Մասիսը մատնացոյց չը լինէր այս սոսկալի ազգային գեղծման համար, միթէ՞ ոչ ոք ուրիշը չը պիտի իմանար այս և շարունակէր գովաբանել նոցա, որոնք վամպիրի դեր կատարելով պիտի փառաբանվէին ամբողջ ազգից ազգասէրի պայծառ անուններով… Էլ ի՞նչ խրախոյս և ի՞նչ բառ հարկաւոր էր գործածել իսկական ազգասէրների համար, երբ ազգի վերջի լուման գրաւողները պիտի հայրենասիրութեամբ փայլէին. երբ Նալբանդեանցներ, Նազարեանցներ և Միանսարեանցներ մատնութեան զոհեր լինելով իջան գերեզման, ազգի կողմից մի համակրութիւն չը գտնելով, միթէ՞ անիրաւութիւն չէ, որ այդ նահատակների մատնողները ամեն տեղ յարգվեն, ամենի առաջ պատիւ վայելեն… Ո՛չ, այսպիսի բան երկար ժամանակ չէ՛ր կարող անպատիժ մնալ և ահա՛ կարծես Աստուծու վրէժխնդրութիւնը Մասիսին իր համար խարազան ընտրեց այդ մարդիկը պատժելու համար։ Ամեն ազնիւ հայ, իմ կարծիքով, պիտի դատաւոր կանգնի այս գործի մէջ և ուշի ուշով հետամուտ լինի Մասիսի յայտնած գեղծման ընթացքին, որից հետ պարտ է իր հանդիսաւոր շնորհակալիքը յայտնել այդ լրագրին, որի շնորհիւ միւս անգամ չի կրի ազգը այսչափ ծանր նիւթական և բարոյական զոհեր. ուրեմն սպասենք Աղաւնիեանցի բանակցութեան վերջաւորութեան, և տեսնենք թէ երկու „յայտնի ազգասէրներ" նո՞յնչափ պիտի անխնայ վարվե՞ն ազգիս չորս հարիւր հազար րուբլու հետ, որչափ Նալբանդեանցի կեանքի հետ, թէ պիտի սարսին վերջապէս ազգի գայրոյթից։"

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌՈՒՄԵԼԻԱ

Վերջին անցքերը բուլգարական իշխանութեան մէջ մեծ տպաւորութիւն գործեցին Ֆիլիպօպօլի ազգաբնակութեան վրա և վշտացրին բուլգարացի բոլոր ազգասէրներին։ Մայիսի 31-ին մի մեծ ժողով կայացաւ բէալական ուսումնարանի շինութեան մէջ։ Այդ ժողովին մօտ 2,000 մարդիկ մասնակցեցին, իսկ այդ թիւը Ֆիլիպօպօլի համար չափազանց մեծ է։ Ժողովի նախագահը խելացի կերպով կատարում էր իր պարտականութիւնները։ Մի քանի ճառախօսներ յարձակվեցին իշխան Աղէքսանդրի հակասահմանադրական քաղաքականութեան վրա։ Ժողովի վերջանալու ժամանակ կարդացվեցաւ խօրվատական ուսանողների ազդարարութիւնը բուլգարական ժողովրդին, որ ընդունվեցաւ միաբան ծափահարութիւններով։ Ժողովը հետևեալ վճիռը կայացրեց։

„Ֆիլիպօպօլի բնակիչները, հաւաքվելով հիւսիսային Բուլգարիայի գործերի կրիտիկական դրութիւնը քննելու համար, վճռեցին՝ բարձրաձայն դատապարտել Բուլգարիայի մէջ կատարվող հակասահմանադրական գործողութիւնները, ցոյց տալ մեր եղբայրներին այն անդունդը, որ պատրաստում է նրանց համար բուլգարական կառավարութիւնը, ցոյց տալ նրանց սրբազան պարտականութիւնը սահմանադրութիւնը պաշտպանելու համար, որ ապահովում է նրանց ազատութիւնը և միակ գրաւական է բուլգարական ժողովրդի ապագայ զարգացման և բարօրութեան համար։"

Ժողովին ներկայ գտնվող օտարականները և ռուսները զարմացել էին բուլգարացիների զգուշութիւնից և սառնասրտութիւնից։ Ասում են, որ այդպիսի ժողովներ կը կայանան Արևելեան-Ռումելիայի այլ քաղաքներում։

Տեղական մամուլը, որ առաջ զգուշութեամբ վերաբերվեցաւ Սօֆիայի մէջ կատարված յեղափոխութեանը, այժմ սկսել է սաստիկ յարձակվել իշխանութեան մէջ կատարվող վերջին կարգադրութիւնների վրա։ Մանաւանդ նա զայրացած է զինուորական դատարաններ հիմնելու և մամուլի ազատութիւնը սահմանափակելու դէմ։ Մանաւանդ սաստիկ պախարակում է իշխան Աղէքսանդրի բռնած ընթացքը „Народный Гласъ" լրագիրը, որ աշխատում է արտայայտել ժողովրդի կարծիքներն ու ցանկութիւնները։

ՖՐԱՆՍԻԱ

Վերջին երկու շաբաթների ընթացքում օրից օր սպասվում էր Դիւֆօրի մահուան համբաւը։ Դիւֆօրը իրաւացի կերպով համարվում էր երևելի փաստաբան և պետական գործիչ։ Նա չափազանց ազնիւ և խիստ մի բնաւորութեան տէր մարդ էր։ Դիւֆօր մի ժամանակ Թիէրի գործակիցն էր և հակառակորդը քաղաքական ասպարէզի վրա։ Վերջին տարիների ընթացքում Դիւֆօր հեռու էր կենում քաղաքական գործունէութիւնից և իր վերջին օրերը անց էր կացնում գիւղում։ Դիւֆօր ծնվեցաւ 1798 թուականին և մասնակցեց վերջին դարի